

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ՈՉ ԲԱՑԱՀԱՅՏ ԺԽՏԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԲԱՅԵՐԻ ԲԱՌԱՅԻՆ-ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՆԱԻՐԱ ՇԱՉԻԼՎՅԱՆ**

Երևանի պետական համալսարան

բ.գ.թ., դոցենտ

naira.shachilvyan@ysu.am

ՎԱՐԴՈՒՇ ՄԱԿԻՉՅԱՆ

Երևանի պետական համալսարան

բ.գ.թ., ասիստենտ

vardush.makichyan@ysu.am

DOI: 10.57236/1829-0183-2024.2(31)-72

Համառոտագիր

Ոչ բացահայտ ժխտումը կարևոր դեր է խաղում հաղորդակցման գործընթացում և դրսևորվում է լեզվի բոլոր մակարդակներում: Սույն հոդվածում կառուցվածքային-իմաստաբանական սկզբունքով քննության են առնվում գերմաներենի ոչ բացահայտ (ներակա) ժխտական նշանակությամբ բայերը: Դրանք կազմությամբ հաստատական բառային միավորներ են, որոնց մեկնաբանությունը բացատրական բառարաններում տրվում է որևէ ժխտական մասնիկով, ժխտական նախաձանցով կամ ժխտական ցուցիչով հավելյալ տարրերի ներառմամբ: Ներակա ժխտումով բայերի միջոցով ոչ միայն ժխտվում է տվյալ առարկայի կամ երևույթի գոյությունը, այլև ժխտական նշանակությանը միահյուսվում են այլ իմաստներ՝ արգելք, մերժում, հակազդում, դիմադրություն, անտեսում, բացակայություն և այլն: Նշված իմաստաբանական հատկանիշները հիմք են հանդիսացել սույն հոդվածի շրջանակներում դրանց տարբեր բառային-իմաստաբանական խմբերով դասակարգման և ուսումնասիրության համար: Գերմաներենի ներակա ժխտումով բայերի յուրահատկությունները մեկնաբանելու նպատակով հոդվածում ներկայացվում են նաև հայերենի համարժեք փաստերը: Ցույց է տրվում, որ գերմաներենում և հայերենում գործառույթի տեսանկյունից առանձնակի տարբերություններ չեն նկատվում: Ներակա ժխտումով բայերը, չունենալով որևէ արտակա ժխտական ցուցիչ հանդիսանում են բառային մակարդակում ժխտման արտահայտման միջոցներ և նպաստում ժխտական բազմաբնույթ հարաբերությունների դրսևորմանը:

Բանալի բառեր և բառակապակցություններ. ներակա ժխտում, ժխտական իմակ, իմաստաբանական վերլուծություն, բայական նախաձանց, փոխակերպական մեթոդ, միկրոդաշտ, դոմինանտ բայ, պատճառական բայեր, ավարտական բայեր:

**LEXICAL- SEMANTIC ANALYSIS OF VERBS WITH AN IMPLICIT
NEGATIVE MEANING IN MODERN GERMAN**

NAIRA SHACHILVYAN

Yerevan State University

Ph.D. Associate Professor

naira.shachilvyan@ysu.am

VARDUSH MAKICHYAN

Yerevan State University

Ph.D. Assistance

vardush.makichyan@ysu.am

Abstract

Implicit negation plays an important role in the communication process and occurs at all levels of language. In this article, the German verbs with implicit negative meaning are examined according to the structural-semantic principle. These are affirmative words, the interpretation of which is given in the dictionaries by the inclusion of additional elements with a negative particle, a negative prefix or a negative indicator. With the help of implicit negative verbs is not only denied the existence of a given object or phenomenon, but also other meanings such as prohibition, refusal, opposition, resistance, ignoring, absence, etc. are intertwined with the meaning of negation.

The mentioned semantic features were the basis for their classification and study in different lexical-semantic groups within the framework of this article. In order to interpret the peculiarities of implicit negative verbs in German, the article also presents equivalent facts of the Armenian language. It is shown that there are no significant differences in terms of function in German and Armenian. Implicit negative verbs, having no external negation indicator, are means of expressing negation at the lexical level and contribute to the manifestation of various relations of negation.

Keywords and phrases: implicit negation, negative seme, semantic analysis, verb prefix, transformation method, microfield, dominant verb, causative verbs, terminative verbs.

**ЛЕКСИКО-СЕМАНТИЧЕСКИЙ АНАЛИЗ ГЛАГОЛОВ С
ИМПЛИЦИТНЫМ ОТРИЦАТЕЛЬНЫМ ЗНАЧЕНИЕМ В
СОВРЕМЕННОМ НЕМЕЦКОМ ЯЗЫКЕ
НАИРА ШАЧИЛВЯН**

Ереванский государственный университет

к. ф. н., доцент

naira.shachilvyan@ysu.am

ВАРДУШ МАКИЧЯН

Ереванский государственный университет

к. ф. н., ассистент

vardush.makichyan@ysu.am

Аннотация

Имплицитное отрицание играет важную роль в процессе коммуникации и встречается на всех уровнях языка. В данной статье немецкие глаголы с имплицитным отрицанием рассматриваются по структурно-семантическому принципу. Это утвердительные слова, толкование которых в словарях дается путем включения дополнительных элементов с отрицательной частицей, отрицательной приставкой или отрицательным показателем. С помощью имплицитных отрицательных глаголов не только отрицается существование того или иного предмета или явления, но и со значением отрицания переплетаются другие значения, такие как запрет, отказ, противодействие, сопротивление, игнорирование, отсутствие и т.д.

Указанные семантические особенности послужили основанием для их классификации и изучения в различных лексико-семантических группах в рамках данной статьи. Для интерпретации особенностей имплицитных отрицательных глаголов в немецком языке в статье также приводятся эквивалентные факты из армянского языка. Показано, что существенных различий в плане функционирования в немецком и армянском языках нет. Имплицитные отрицательные глаголы, не имея внешнего показателя отрицания, являются средством выражения отрицания на лексическом уровне и способствуют проявлению различных отношений отрицания.

Ключевые слова и словосочетания: имплицитное отрицание, отрицательная сема, семантический анализ, глагольная приставка, трансформационный метод, микрополе, доминантный глагол, каузативные глаголы, терминативные глаголы.

Լեզվաբանական գրականության մեջ ժխտումը դիտարկվում է որպես հասկացական կարգ, որը բացահայտ և ոչ բացահայտ կերպով իր արտահայտությունն է գտնում լեզվի տարբեր մակարդակներում (Ի. Մեջանինով, Ա. Բոնդարկո, Օ. Եսպերսեն): Ընդհանուր առմամբ, ոչ բացահայտությունը

մեկնաբանվում է որպես լեզվական երևույթների արտահայտություն՝ ոչ ձևական միջոցներով: Լեզվաբաններ Ֆ. դե Սոսյուրը [12], Վ.Խարիտոնովան [13], Վ. Գակը [9, 10], Ս. Կաքնելսոնը [11] իրենց աշխատություններում նշում են որոշ դեպքերում արտահայտության և բովանդակության պլանների անհամամասնության մասին, երբ նշանակիչը ձգտում է կիրառվել իրեն ոչ հատուկ այլ գործառույթներով, իսկ նշանակյալը՝ ձգտում արտահայտվել նաև այլ միջոցներով: Ոչ բացահայտ (ներակա) ժխտման հիմքում ևս արտահայտության և բովանդակության պլանների անհամամասնությունն է: Ըստ Զ. Շմիդտի՝ ոչ բացահայտ ժխտում են արտահայտում այն ասույթները, որոնք «համաձայն խոսողի նպատակադրման պետք է իրագործեն ժխտման գործառույթ առանց ժխտական տարրի կիրառման» [5, S.174]: Ընդ որում, բացահայտ և ոչ բացահայտ ժխտման էությունը միևնույնն է. լեզվի խորքային մակարդակում առկա է ժխտական իմակը, որն արտահայտության պլանում դրսևորվում է տարբեր եղանակներով: Լեզվում առկա նման կառույցների ժխտական բնույթը տեսանելի է դառնում հիմնականում փոխակերպման վերլուծության միջոցով:

Բառային մակարդակում, ի թիվս այլ միջոցների, ժխտման արտահայտման գործառույթով հանդես են գալիս ոչ բացահայտ ժխտական նշանակությամբ (ժխտական ներիմաստով) բայերը, որոնք ժխտական իմաստ են արտահայտում՝ չունենալով որևէ արտակա ժխտական ցուցիչ: Սույն ուսումնասիրության շրջանակներում փորձ է արվել կառուցվածքային-իմաստաբանական սկզբունքով վերլուծության ենթարկել գերմաներենի ոչ բացահայտ ժխտական նշանակությամբ բայերը, որոնց մեկնաբանությունը գերմաներենի հեղինակավոր բացատրական բառարաններում [2, 7] տրվում է որևէ ժխտական ցուցիչով կամ այնպիսի բառային միավորով, որը ցույց է տալիս բովանդակության պլանում առկա ժխտական իմակը: Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են փոխակերպական վերլուծության այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ շրջասույթը, փոխարկումը, ծավալումը (ընդարձակումը), որոնց կիրառման շնորհիվ տեսանելի է դառնում բառիմաստում առկա «թաքնված» ժխտական իմակը, ինչպես նաև զուգադրական վերլուծության մեթոդը, որը հնարավորություն է ընձեռում վերհանելու լեզուների միջև առկա նմանություններն ու տարբերությունները՝ ընդհանրական եզրահանգումներ կատարելու նպատակով:

Ներակա ժխտական իմաստով բայերի ժխտական իմակը բացահայտվում է փոխակերպման միջոցով: Հնարավոր փոխակերպումներն են՝ 1. նախաձանցի փոխարինումը nicht ժխտական մասնիկով (նվազագույն փոխակերպում), օր.՝ abraten→nicht raten, 2. ժխտական նշանակությամբ բայի փոխարինումը համապատասխան հականիշ բայով և nicht ժխտական մասնիկով, օր.՝ verbieten→nicht erlauben, ablehnen→nicht annehmen, 3. որևէ հավելյալ տարրի/տարրերի ներառումը, օր.՝ verlieren→nicht mehr haben; zweifeln→nicht genau wissen; vorgeben→bewusst nicht richtig (fälschlich) behaupten, 4. նկարագրական մեկնաբանություն, օր.՝ sperren→den Zugang zu etw. nicht möglich machen; beseitigen→kausieren, dass etw. nicht mehr existiert:

Նշված փոխակերպումները համարվում են իմաստաբանական համար-ժեքներ [8, c.324], ընդ որում, ակնհայտ է, որ վերջին երկու փոխակերպումներում ներառման հարաբերությունն ավելի մեծ ծավալի է քան առաջին և երկրորդ դեպքերում: Հարկ է նշել, որ ներակա ժխտական իմաստով ասույթները, որպես կանոն, ավելի կարճ են, քան համապատասխան արտակա ժխտմամբ ասույթները, ինչը ենթադրում է լեզվական միջոցների խնայողություն, հետևաբար, խոսողի/գրողի ջանքերի տնտեսում:

Ձևակազմական տեսանկյունից ներակա ժխտումով բայերը ներկայանում են երկու խմբով. 1. բայեր, որոնցում ժխտական իմակը ներակայում է հիմնական ձևությամբ՝ արմատում, ինչպիսիք են՝ fehlen, mangeln, versäumen, schweigen, vermeiden, betrügen, ignorieren և այլն, 2. բայեր, որոնցում ժխտական իմակը ներմուծվում է նախաձանցների միջոցով, ինչպիսիք են՝ verbieten, verpassen, verrechnen, absagen, ablehnen, ausbleiben, aufhören, aufgeben և այլն: Հարկ է նշել, որ նշված նախաձանցները կիրառվում են նաև այլ նշանակություններով: Օրինակ՝ ver- նախաձանցը որոշ դեպքերում բայի հիմնական նշանակությանը հաղորդում է հակառակ իմաստ, ինչպես՝ verachten-nicht achten/արհամարհել, չհարգել, այլ դեպքերում, ընդհակառակը, արտահայտում է որևէ հատկանիշի առկայություն, ինչպես՝ vergolden-mit Gold bedecken/ոսկեզօծել: Այս դեպքում կարևոր է նաև հիմքի նշանակությունը, քանի որ հիմքի և ածանցի նշանակության փոխներթափանցման արդյունքում է ձևավորվում համապատասխան նշանակությունը:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ոչ բացահայտ ժխտումով բա-
յերը ժխտական իմակից բացի ներակայում են նաև այլ իմաստաբանական
հատկանիշներ, ինչպես օրինակ՝ արգելք, մերժում, հակազդում, դիմադրու-
թյուն, անտեսում, բացակայություն և այլն, դրանք կարելի է դասակարգել
տարբեր բառային-իմաստաբանական խմբերով: Ընդ որում, յուրաքանչյուր
խումբ հանդես է գալիս որպես առանձին միկրոդաշտ՝ իրեն բնորոշ իմաս-
տաբանական հատկանիշներով: Միկրոդաշտի կենտրոնում, որպես առանց-
քային անդամ, դոմինանտ բայն է, որում առավելագույնս արտացոլված են
տվյալ միկրոդաշտին բնորոշ իմաստաբանական հատկանիշները, իսկ եզրա-
մասում չեն բացառվում անցումային դեպքերը, երբ կախված հավելյալ իմաս-
տաբանական հատկանիշների առկայությունից, տվյալ բայը կարող է անցում
կատարել դեպի այլ միկրոդաշտ: Սույն ուսումնասիրության շրջանակներում
առանձնացրել ենք ոչ բացահայտ ժխտական նշանակությամբ բայերի չորս
հիմնական խումբ, որոնք կներկայացվեն ստորև՝ հայերենի համապատաս-
խան փաստերի ներգրավմամբ.

I. պատճառական բայեր, որոնք ցույց են տալիս այնպիսի գործողու-
թյուն, որը ենթական կատարել է տալիս մեկ ուրիշին, դրդապատճառ է դառ-
նում գործողության կատարման համար: Այս դեպքում խոսքը ժխտական
նշանակությամբ պատճառական բայերի մասին է, ընդ որում ազդեցության
օբյեկտ կարող է հանդիսանալ ոչ միայն անձը, այլ նաև առարկան:

Այս խմբում ներառվում են բայեր, որոնք ցույց են տալիս՝

արգելք, հորդոր, նախազգուշացում, օր.՝ *verbieten, mahnen, untersagen, abhalten, warnen, inhibieren, verwehren, zurückhalten, aufhalten* և
այլն: Այս բայերի ընդհանուր նշանակությունն է՝ “jmdm. etw. nicht erlauben;
verlangen, etw. nicht zu tun; nicht gestatten”: Հայերենում նշված իմաստով
հանդես են գալիս՝ արգելել, խափանել, կասեցնել, զսպել, ետ պահել, հոր-
դորել, նախազգուշացնել և մի շարք այլ ներակա ժխտումով բայեր, որոնցում
առկա քողարկված ժխտական իմակը հաճախ բացահայտվում է միայն
համապատասխան համատեքստում: Այստեղ դոմինանտ է հանդիսանում
verbieten/արգելել բայը: Օր.՝

“Ich verbiete Ihnen, einen «Ես արգելում եմ Ձեզ որևէ քայլ
Schritt aus dem Haus zu tun!” sagte անել տնից դուրս», – ասաց դոկտոր

Doktor Feller. [1, S.88] → "Ich erlaube Ihnen nicht, einen Schritt aus dem Haus zu tun!" sagte Doktor Feller. ֆելլերը:→ «Ես Ձեզթույլ չեմ տալիս որևէ քայլ անել տնից դուրս»,– ասաց դոկտոր ֆելլերը:

դիմադրություն, հակազդեցություն (ենթական խոչընդոտ է ստեղծում գործողության իրականացման ճանապարհին), օրինակ գերմաներեն՝ hindern, stören, hemmen, ab-, ver-, be- hindern, bremsen, aus-, ab-, ver-sperren, (ver)hütten, abwenden, (er)wehren և այլն, որոնց ընդհանուր նշանակությունն է՝ "nicht gestatten, nicht zulassen, nicht ermöglichen, etw. zu tun": Հայերենում համապատասխանաբար հանդես են գալիս՝ հակազդել, դիմադրել, դեմ կանգնել, հակառակել, արգելափակել, արգելակել, ետ մղել, կանխել, խոչընդոտել և մի շարք այլ բայերը: Այս խմբում դոմինանտ է հանդիսանում hindern/արգելք հանդիսանալ, խանգարել բայը: Ընդ որում, նշված բայերով նախադասության մեջ ենթական կարող է լինել ինչպես անձ, այնպես էլ՝ իր, երևույթ, հասկացություն: Օր.՝

Er findet nur fremde Gesichter, und die Unruhe hindert ihn, neue Bekanntschaften zu schließen [6, S. 294].→Er findet nur fremde Gesichter, und die Unruhe lässt ihn nicht zu, neue Bekanntschaften zu schließen. Նա միայն անծանոթ դեմքեր է գտնում, և անհանգստությունը խանգարում է նրան նոր ծանոթություններ հաստատել: Նա միայն անծանոթ դեմքեր է գտնում, և անհանգրստությունը թույլ չի տալիս նրան նոր ծանոթություններ հաստատել:

Wie ich es hindern werde, weiß ich noch nicht. Aber ich werde es hindern [...][14].→Wie ich es nicht zulasse weiß ich noch nicht. Aber ich werde es nicht zulassen. Թե ինչպես ես արգելք կհանդիսանամ դրան, դեռ չգիտեմ: Բայց ես արգելք կհանդիսանամ դրան [...]: Թե ինչպես ես թույլ չեմ տա դա, դեռ չգիտեմ: Բայց ես թույլ չեմ տա դա [...]:

վերացում, ոչնչացում, զրկում, օրինակ՝ abschaffen, liquidieren, beseitigen, wegmachen, wegtun, liquidieren, (ver)tilgen, ausräumen, abtun, abbauen, beheben, aufheben, entheben, abolieren, abrogieren, annullieren, removieren, elidieren, entköpfen, entlasten, entziehen և այլն: Նշված բայերի

ընդհանուր նշանակությունն է՝ “etw. nicht gültig machen; kausieren, dass etw. nicht mehr existiert”: Հայերենում նշված իմաստներն են արտահայտում՝ վերացնել, ոչնչացնել, լուծարել, հեռացնել, քանդել, զրկել, գլխատել, ջնջել, դատարկել և այլն բայերը: Այստեղ դոմինանտ է հանդիսանում abschaffen/վերացնել բայը: Օր.՝

[Er] hatte das Königtum Նա վերացրել էր թագավորության-
abgeschafft[3, S.353]. → Das թյունը:→ Թագավորությունն այլևս
Königtum existierte nicht mehr. գոյություն չունեիր:

Ժխտական խոսքային ներգործություն (ենթական դրդում է խնդրին հրաժարվել իրականացնել տվյալ գործողությունը), օր.՝ abraten, widerraten, abreden, widerreden /տարհամոզել, միտքը փոխել տալ և այլն, որոնցում ևս առկա է պառճառականության բաղադրիչ, և որոնց ընդհանուր նշանակությունը կարելի է ներկայացնել որպես՝ ”nicht raten etw. zu tun”, “führe die in der Proposition ausgedrückte Handlung nicht aus”: Այստեղ դոմինանտը abraten/ տարհամոզել, միտքը փոխել տալ բայն է: Օր.՝

Ich hätte Ihnen abgeraten, Ես Ձեզ խորհուրդ կտայի
sich sofort zu entscheiden[14].→Ich ձեռնպահ մնալ անմիջապես որո-
hätte Ihnen nicht geraten, sich sofort շում կայացնելուց:→ Ես Ձեզ խոր-
zu entscheiden. հուրդ չէի տա անմիջապես որո-
շում կայացնել:

Ոչ բացահայտ ժխտական նշանակությամբ պառճառական բայերի շարքում հատուկ ուշադրության է արժանի unterlassen/չանել, բաց թողնել, ձեռք քաշել բայը, քանի որ վերջինս, ի տարբերություն վերը նշված բայերի, բացի ժխտական նշանակությունից, այն է՝ “nicht tun”, այլ իմաստաբանական հատկանիշներ չի ներակայում: Նշված բայով նախադասություններում ենթական բացառում է գործողության իրականացման հնարավորությունը: Օր.՝

Wer sie als lästige Pflicht Նա, ով դա ծանր պարտականու-
empfindet, sollte sie am besten թյուն է համարում, ավելի լավ է ձեռք
unterlassen [14].→ Wer sie als lästige քաշի դրանից: → Նա, ով դա ծանր
Pflicht empfindet, sollte sie am besten պարտականություն է համարում,
nicht machen. ավելի լավ է չկատարի դա:

II. Ոչ բացահայտ ժխտական նշանակությամբ բայեր, որոնց միջոցով արտահայտվում է իրադրության սուբյեկտիվ ընկալումը: Այս խմբում ներառվում են բայեր, որոնք ցույց են տալիս՝

ներքին դիմադրություն, հակազդում, ենթակայի իրադրության մեջ ներգրավված լինելու ցանկության բացակայություն, օր.՝ sich weigern, sich sträuben, sich wehren, sich enthalten, (sich) scheuen, sich hüten, sich widersetzen, widerstehen և այլն, որոնց ընդհանուր նշանակությունն է “etw. nicht ausführen (wollen)”: Հայերենում համապատասխանաբար հանդես են գալիս՝ հրաժարվել, դիմադրել հակառակել, պաշտպանվել, զգուշանալ բայերը: Այստեղ դոմինանտը sich weigern/հրաժարվել բայն է:

Նշված բայերը սուբյեկտիվ հարաբերության բայեր են, որոնք նախադասության մեջ հանդես են գալիս հիմնականում անձ ցույց տվող ենթակայի հետ: Օր.՝

Und ich weigere mich, nach Hause zu fahren, bevor diese Arbeit getan ist[14]. → Und ich fahre nicht nach Hause, bevor diese Arbeit getan ist.	Եվ ես հրաժարվում եմ տուն մեկնել նախքան այս աշխատանքը կատարելը: → Եվ ես տուն չեմ մեկնում նախքան այս աշխատանքը կատարելը:
---	--

անտեսում, արհամարհում, խուսափում (ենթական խուսափում է առկա իրավիճակից), օր.՝ ignorieren, vernachlässigen, abweichen, (ver)meiden, überhören, überlesen, verachten, absehen, ausnehmen, ausschließen, sich etw. entgehen lassen և այլն: Բովանդակության պլանում այս բայերի ընդհանուր նշանակությունն է՝ “nicht bemerken, nicht berücksichtigen (wollen)”: Հայերենում նշված իմաստն արտահայտվում է՝ անտեսել, արհամարհել, շեղվել, խուսափել, բաց թողնել, բացառել և այլն բայերի միջոցով: Այս ենթախմբում դոմինանտը (ver)meiden/խուսափել բայն է: Եվ գերմաներենում, և՛ հայերենում նախադասության մեջ նշված բայերը գործածվում են անձ ցույց տվող ենթակայի հետ, օր.՝

“Iss Äpfel, Junge, solange du kannst, und vermeidedas Rauchen”, sagte er dazu[4, S. 9]. → “Iss Äpfel, solange du kannst, und vermeidedas Rauchen”, sagte er dazu[4, S. 9]. →	«Խնձո՛ր կեր, տղա՛, քանի դեռ կարող ես և խուսափի՛ր ծխելուց», - ասաց նա: → «Խնձո՛ր կեր, տղա՛,
--	--

Junge, solange du kannst, und rauche քանի դեռ կարող ես և մի՛ ծխիր», -
nicht! ասաց նա:

տվյալ երևույթի, առարկայի, հատկանիշի չընդունում, վիճարկում, մերժում, հերքում (ենթական հրաժարվում է ներգրավվել իրադրության մեջ), օր.՝
verwerfen, absagen, absprechen, widersprechen, abstehehen, ablehnen, verschmähen, widerstreiten, widerstehen, widerlegen, abweisen, verweigern, einwenden, versagen (vt), dementieren, abstreiten, (ver)leugnen, bestreiten, renoncieren, abschlagen և այլն: Նշված բայերի ընդհանուր նշանակությունն է “etw. nicht annehmen, nicht akzeptieren, nicht ausführen lassen”: Հայերենում համապատասխանաբար հանդես են գալիս՝ մերժել, բացարկել, ժխտել, հերքել, հրաժարվել, ուրանալ և այլն բայերը: Դոմինանտը absagen/մերժել բայն է: Այս ենթախմբի բայերը նույնպես հիմնականում գործածվում են շնչավոր ենթակայի հետ, ինչպես օր.՝

Sein Bruder hat es abgelehnt, Նրա եղբայրը հրաժարվեց այստեղ
hier ein Haus zu erwerben[6, S.194]. տուն գնել: →Նրա եղբայրն այստեղ
→Sein Bruder hat hier kein Haus տուն չգնեց:
erworben.

III. Ժխտական իմակով սուբյեկտիվ-տեղեկատվական բայեր, որոնք ցույց են տալիս տվյալ իրադրության մասին որոշակի տեղեկատվության առկայությունը և դրա հաղորդման բնույթը: Այս խմբի բայերը ցույց են տալիս՝ առկա տեղեկատվության թաքցնում, գաղտնի պահում, օր.՝
verheimlichen, (ver)schweigen, verschleiern, verhehlen, sekretieren, tarnen, verbeißen և այլն՝ “nicht offenbaren, nicht erkennen lassen” ընդհանուր նշանակությամբ: Հայերենում բովանդակության պլանում նշված իմաստն արտահայտվում է՝ թաքցնել, գաղտնի պահել, ծածկել, լռել, լռության մատնել, քողարկել և այլն բայերի միջոցով: Դոմինանտ է հանդիսանում verheimlichen/ թաքցնել բայը: Օր.՝

Sie verschweigen auch jetzt, Նրանք այժմ նույնպես թաքցնում
dass es Schwierigkeiten gibt [1, S. են, որ դժվարություններ կան:
184]. → Sie sagen auch jetzt nichts →Նրանք այժմ նույնպես ոչինչ չեն
über die Schwierigkeiten. ասում դժվարությունների մասին:

կեղծում, ձևացում, մոլորության հանգեցում (ենթական, որպես առկա իրադրություն, դիտավորությամբ ներկայացնում է գոյություն չունեցող իրողությունը), օր՝ (vor)täuschen, simulieren, sich (ver)stellen, sich ausgeben als, düpiieren, (be)trügen, flunkern, schwindeln, (vor)spielen, irreführen, (ver)fälschen, vorgeben, vormachen, verleumden, vorspiegeln, (vor)heucheln, vor-, an-, be-, ver- lügen, verkneifen և այլն, որոնց հիմնական նշանակությունն է՝ “bewusst etw. falsch behaupten”, “bewusst fälschlich handeln”, “bewusst etw. falsch darstellen”: Հայերենում նշված իմաստով հանդես են գալիս՝ խաբել, մոլորեցնել, ստել, կեղծել, աչքերին թող փչել, հերյուրել, ձևացնել, կեղծավորել, շողորժորթել, խարդախել բայերը: Այս ենթախմբի դոմինանտը (vor)täuschen/խաբել, մոլորեցնել, ձևացնել բայն է: Օր.՝

Taler schloss die Augen. Er **Թալերը փակեց աչքերը:** Նա täuschte Müdigkeit vor[...] [1, S. 127]. → ձևացրեց, թե հոգնած է:—Թալերը Taler schloss die Augen. Er war nicht **փակեց աչքերը:** Նա հոգնած չէր: müde.

իրադրության անիրական-պատրանքային ընկալում, օր.՝ sich täuschen, sich irren, abirren, durchirren, verlaufen, vermeinen, sich versehen, wähnen, imaginieren, sich verrechnen, sich einbilden և այլն՝ “nicht richtig meinen” ընդհանուր նշանակությամբ: Հայերենում բովանդակության պլանում նշված իմաստն են ներակայում սխալվել, խաբվել, մոլորվել, սխալմամբ կարծել, սխալ հաշվարկել բայերը: Այս ենթախմբում դոմինանտ է հանդիսանում sich täuschen/սխալվել, սխալմամբ կարծել բայը: Օր.՝

Ich habe mich getäuscht, seine **Ես սխալմամբ կարծեցի, թե հաս-** Worte verstanden zu haben[14]. → Ich **կացել եմ նրա խոսքերը:**—Ես նրա habe seine Worte nicht verstanden. **խոսքերը չեմ հասկացել:**

անվստահություն, կասկած an-, be- zweifeln, misstrauen և այլն՝ “nicht genau wissen”, “nicht fest glauben”, “nicht sicher sein”, “nicht glauben wollen” ընդհանուր նշանակությամբ: Հայերենում համարժեք նշանակությամբ կիրառվում են կասկածել, կասկածի ենթարկել, տարակուսել բայերը: Դոմինանտ է հանդիսանում zweifeln/կասկածել բայը: Օր.՝

Je öfter er die Geschichten **Որքան հաճախ էր նա լսում այդ** hörte, desto mehr bezweifelte er, **պատմությունները, այնքան ավելի էր**

dass alle auf Wahrheit beruhten [14]. կասկածում, որ դրանք բոլորը հիմնը-
→ Er glaubte nicht, dass die ված են ճշմարտության վրա: → Նա
Geschichten auf Wahrheit beruhten. չէր հավատում, որ պատմությունները
հիմնված են ճշմարտության վրա:

IV. Ներակա ժխտում արտահայտող բայերի շարքին են դասվում նաև
որևէ անձի, առարկայի, հատկանիշի, իրադրության առկա չլինելը, բացակա-
յությունը ցույց տվող բայերը: Գերմաներենում դրանք՝ fehlen, ausbleiben,
ausfallen, wegsein, unterbleiben, wegbleiben, wegfallen և մի շարք այլբայեր
են՝“nicht erscheinen, nicht geschehen, nicht stattfinden” ընդհանուր նշանակու-
թյամբ, իսկ հայերենում համապատասխանաբար կիրառվում են՝ բացակայել,
հեռու լինել և մի շարք այլ «բացակայության իմակ» ներակայող բայերը: Հարկ
է նշել նաև, որ գերմաներենի նշված իմաստով բայերի որոշ համարժեքներ
հայերենում հանդես են գալիս բացահայտ ժխտական ցուցիչով, ինչպես՝
ausfallen/տեղի չունենալ, unterbleiben/չկայանալ և այլն: Այստեղ, որպես
դրմինանտ, հանդես է գալիս fehlen/բացակայել բայը: Օր.՝

Wenn das wirklich seine Worte Եթե սրանք իսկապես նրա
sind, dann fehlt ihm die Kompetenz, խոսքերն են, ապա նա զուրկ է այս
diese Zeit zu beurteilen[14].→Wenn das ժամանակը դատելու իրավասու-
wirklich seine Worte sind, dann hat er թյունից: → Եթե սրանք իսկապես
keine Kompetenz, diese Zeit zu նրա խոսքերն են, ապա նա չունի
beurteilen. իրավասություն դատել այս ժամա-
նակը:

Այս խմբին են պատկանում նաև՝

գործողության ավարտը ցույց տվող բայերը (terminative Verben/ավար-
տական բայեր), որոնց իմաստային կառույցում առկա է ներքին սահման,
վերջնակետ, որին հասնելով՝ գործողությունը սպառվում է, իրադրությունը
դադարում է գոյություն ունենալ, op.՝ aufhören, ablassen (vi), einstellen,
aussetzen (vi), abbrechen, aussein, niederlegen (lassen), vergehen, verklingen,
verstummen, verwehen, verhallen, verrauchen, unterbrechen, enden, aufhalten
և այլն: Նշված բայերի ընդհանուր նշանակությունը կարելի է ներկայացնել
որպես՝“nicht weitermachen”, “nicht mehr machen”, “zu Ende gehen”: Հայերե-
նում նշված իմաստներն արտահայտվում են դադարել, դադարեցնել, թողնել,

ընդհատել, ընդմիջել, խզել, վերջանալ, անցնել (ժամանակի մասին) և այլն բայերի միջոցով: Այս ենթախմբի դոմինանտը aufhören/դադարելըն է:Օր.՝

Ich hörte auf zu stehlen, weil ich es satt hatte, immer wieder erwischt zu werden[14].→Ich stahl nicht mehr, weil ich es satt hatte, immer wieder erwischt zu werden. Ես դադարեցի գողանալ, որովհետև ես դուրս եկի անընդհատ բռնվելուց:→Ես այլևս չեի գողանում, որովհետև ես դուրս եկի անընդհատ բռնվելուց:

անհաջողություն, չհաջողված փորձ, ձախողում ցույց տվող բայերը, օր.՝ scheitern, schiefgehen, verquergehen, fehlschlagen, zusammenbrechen, versagen (vi), versäumen, verpassen և այլն, որոնց ընդհանուր նշանակությունն է՝ “nicht zum Ziel gelangen”, “keinen Erfolg haben”, “nicht erreichen”, “misslingen”: Հայերենում դա արտահայտվում է ձախողվել, անհաջողության մատնվել, տապալվել, բաց թողնել (առիթը, ժամանակը և այլն) բայերի միջոցով, որոնցում ակնհայտ է չկայացած իրողության առկայությունը: Այստեղ, որպես դոմինանտ, հանդես է գալիս scheitern/ձախողվելըն: Օր.՝

Vor einer Woche Scheiterten die Landwirtschaftsminister bei dem Versuch, die gemeinschaftliche Weinproduktion zu begrenzen [14]. →Der Versuch der Landwirtschaftsminister, die gemeinschaftliche Weinproduktion zu begrenzen, war misslungen./Der Versuch der Landwirtschaftsminister, die gemeinschaftliche Weinproduktion zu begrenzen, war nicht gelungen.	Մեկ շաբաթ առաջ գյուղատնտեսության նախարարները ձախողվեցին՝ փորձելով սահմանափակել գինու համատեղ արտադրությունը: →Գյուղատնտեսության նախարարների՝ գինու համատեղ արտադրությունը սահմանափակելու փորձը ձախողվեց: /Գյուղատնտեսության նախարարների՝ գինու համատեղ արտադրությունը սահմանափակելու փորձը չհաջողվեց:
---	---

Կորուստ, զրկանք ցույց տվող բայերը: Ընդ որում, նշված իմաստով բայերը բաժանվում են երկու ենթախմբի՝ ելնելով իրենց իմաստային կառույցում առկա կորստի, որևէ բան այլևս չունենալու փաստի հուզական գնահատման առկայությունից/բացակայությունից:

ա) գերմաներեն՝ einbüßen, entbehren, ermangeln, vermissen, sich abgewöhnen, sich entwöhnen բայերը, որոնց ընդհանուր նշանակությունն է՝ “etw. (jmd) nicht haben, was man gern hätte, wen man brauchte”, բովանդակության պլանում առանձնանում են վառ արտահայտված հուզական նրբիմաստների առկայությամբ: Հայերենում համարժեք նշանակությամբ հանդես են գալիս՝ կորցնել, զրկվել, պակասել, մի բանի կարիք ունենալ, բացակայությունը նկատել, պակասն զգալ, սովորությունը թողնել, տարսովորել և այլն ներակա ժխտական իմաստով բայերը: Այստեղ դոմինանտը ermangeln/պակասելբայն է: Օր.՝

Sie, in deren Haus sich alle vergnügten [...] ermangelte ganz und gar der Freude[14].→Sie, in deren Haus sich alle vergnügten, empfand gar keine Freude.

Նա, ում տանը բոլորը զվարճանում էին, լիովին ուրախության պակասուններ: →Նա, ում տանը բոլորը զվարճանում էին, բոլորովին ուրախ չէր:

Er vermisste die Tasse mit Bären, aus der er als Kind getrunken hatte [14].→ Er hatte die Tasse mit Bären nicht mehr, aus der er als Kind getrunken hatte.

Նա կարոտում էր արջերով այն գավաթը, որից երեխա ժամանակ խմել էր: → Նա այլևս չունեի արջերով այն գավաթը, որից երեխա ժամանակ խմել էր:

բ) գերմաներեն՝ verlieren, aufgeben, sich entziehen, verlernen, և հայերեն՝ կորցնել, թողնել, հրաժարվել, զրկվել “etw. nicht mehr haben” ընդհանուր նշանակությամբ բայերի բովանդակության պլանում բացակայում են կամ ավելի թույլ են արտահայտված վերոնշյալ հուզական նրբիմաստները: Անշուշտ,նշված նրբիմաստների առկայությունը/բացակայությունը ակնհայտ կարող է լինել միայն համապատասխան համատեքստի վերլուծության արդյունքում: Այս ենթախմբում դոմինանտ բայը verlieren/կորցնել բայն է, որի ազդեցության օբյեկտը կարող են լինել ինչպես անձ, այնպես էլ առարկա, հատկանիշ կամ որևէ երևույթ ցույց տվող բառեր: Օր.՝

Kalmus verlor seine Sicherheit, die er durch die schweren Monate der Flucht getragen hatte [1, S.199].
→ Kalmus hatte nicht mehr die Sicherheit, die er durch die schweren Monate der Flucht getragen hatte.

Կալմուսը կորցրեց իր վստահությունը, որն ուներ փախուստի դժվարին ամիսներին: → Կալմուսն այլևս չուներ այն վստահությունը, որն ուներ փախուստի դժվարին ամիսներին:

Nach der Schule verlor ich ihn aus den Augen[14]. → Nach der Schule sah ich ihn nicht mehr.
Դպրոցից հետո ես կորցրի նրան տեսադաշտից: → Դպրոցից հետո ես նրան այլևս չտեսա:

Այս ենթախմբին են պատկանում նաև vergessen/մոռանալ՝ “sich nicht an etw., an jmdn. erinnern” և verlernen/մոռանալ (սովորածը, իմացածը), տարսովորել՝ “sich nicht mehr können wissen” ընդհանուր նշանակությամբ բայերը: Ընդ որում, vergessen բայով ասույթի ճշգրիտ փոխակերպումը կախված է համատեքստից, օր.՝ Er hat sein Buch vergessen ասույթը, կախված համատեքստից, կարող է ունենալ տարբեր մեկնաբանություններ՝ Er denkt an sein Buch nicht mehr և Er hat sein Buch zu Hause liegen lassen/Er hat das Buch nicht mitgenommen:

Verzichten/հրաժարվել և միևնույն նշանակությամբ՝ sich entsagen բայերը, կախված համատեքստից, կարող են հանդես գալ և՛ առաջին, և՛ երկրորդ ենթախմբում:

Եզրակացություն

Ոչ բացահայտ ժխտական նշանակության ընկալումը հնարավոր է դառնում փոխակերպման շնորհիվ: Արդյունքում բացահայտ ժխտական տարր ներակայող ասույթը փաստում են ելակետային ասույթում ժխտական նշանակության առկայության, ինչպես նաև դրա ընդհանրական բնույթի մասին: Գերմաներենի ոչ բացահայտ ժխտական նշանակությամբ բայերի իմաստաբանական վերլուծությունը հնարավորություն է ընձեռում վեր հանել ժխտման խորքային հատկանիշներ և ցույց տալ, որ նշված միջոցներով ոչ

միայն ժխտվում է տվյալ առարկայի կամ երևույթի գոյությունը, այլև ժխտական նշանակությանը միահյուսվում են այլ իմաստներ՝ արգելք, մերժում, դիմադրություն, հակադրություն և այլն: Ընդ որում, ներակա ժխտում արտահայտող վերոնշյալ միջոցները գերմաներենում և հայերենում գործառույթի տեսակետից առանձնակի տարբերություններ չեն ցուցաբերում: Դրանք, հանդիսանալով ժխտման համակարգի բաղադրիչ տարրեր, կիրառվում են ժխտական տեղեկույթի հաղորդման գործառույթով և նպաստում ժխտական բազմաբնույթ հարաբերությունների դրսևորմանը:

Գրականության ցանկ

1. Arnold J., Aufstand der Totgesagten, Halle/Saale: Mitterdeutscher Verlag, 1977, 462 S.
2. Duden, Deutsches Universalwörterbuch, Mannheim-Leipzig-Wien-Zürich, 1996, 1816 S.
3. Feuchtwanger L., Narrenweisheit oder Tod und Verklärung des Jean-Jasques Rousseu, Berlin, Weimar: Aufbau-Verlag, 1970, 462 S.
4. Harder I., Melodien im Wind, Berlin: Neues Leben, 1973, 203 S.
5. Schmidt S., Texttheoretische Aspekte der Negation // Zeitschrift für germanistische Linguistik, 1973, Bd.1, N2, S. 178-208
6. Steinberg W., Der Tag ist in die Nacht verliebt, Halle/Saale: Mitteldeutscher Verlag, 1970, 506 S.
7. Wahrig G., Deutsches Wörterbuch, München: Bertelsmann Lexikon Verlag, 1978, 4318 S.
8. Апресян Ю., Лексическая семантика: Синонимические средства языка, М.:Школа «Языки русской культуры», 1995, 472 с.
9. Гак В., Об использовании идеи симметрии в языкознании, В кн.: Лексическая и грамматическая семантика романских языков, Калинин: Калининск. гос. ун-т, 1980, с. 41-51.
10. Гак В., Языковые преобразования, М.: Школа «Языки русской культуры», 1998, 768с.
11. Кацнельсон С., Типология языка и речевое мышление, М.:Либроком 2009, 218с.
12. Соссюр Ф., Труды по языкознанию, М.: Прогресс, 1977, 696с.

13. Харитонова И., Роль категории “скрытой грамматики” в организации текста: На материале немецкого языка.- Сб. науч. трудов/МГПИИЯ им. М. Тореца, 1976, вып. 103, с.196-204.
14. <https://www.dwds.de/wb>